

Յարց ու պատասխան. Արևելյան գործընկերությունը 2020-ից հետո
18 մարտի 2020թ

Ինչու է ԵՄ-ն որդեգրում Արևելյան գործընկերության նոր քաղաքական
շրջանակ՝ 2020 թվականից հետո:

Արևելյան գործընկերության (ԱԳ) «2020 թվականի 20 արդյունք» ընթացիկ
շրջանակային օրակարգի ավարտի կապակցությամբ՝ մինչև այս տարվա
ավարտը, անհրաժեշտ է եղել ձեռնարկել ԱԳ ապագայի վերաբերյալ ընդլայնված
խորհրդածություն: 2019 թվականի հունիսին՝ Գործընկերության մեկնարկի 10-
ամյակին համընթաց Եվրոպական խորհուրդը որոշմամբ Եվրահանձնաժողովին
և ԵՄ Բարձր ներկայացուցչին հանձնարարվել է այս տարվա հունիսին
կայանալիք Արևելյան գործընկերության հաջորդ գագաթնաժողովին ընդառաջ՝
ներկայացնել 2020թվականից հետո ընկած ժամանակահատվածի
երկարաժամկետ քաղաքական նպատակների առաջարկությունների փաթեթ:

Արևելյան գործընկերությունը միտված է քաղաքական և տնտեսական
հարաբերությունների խորացմանը Եվրոպական միության, ԵՄ անդամ
պետությունների և Արևելյան գործընկեր վեց երկրների միջև, և շարունակում է
մնալ ԵՄ արտաքին քաղաքականության առանցքը: Քաղաքական նոր շրջանակը
կամրապնդի դիմակայությունը առկա մարտահրավերների լույսի ներքո,
կիսթանի կայուն զարգացումը և կապահովի շոշափելի արդյունքներ
քաղաքացիների համար: Այն կնպաստի նաև Եվրոպայի հզորացմանը:

Ի՞նչ է առաջարկվում ԱԳ նոր քաղաքական շրջանակով: Ի՞նչն է նոր կամ տարբեր:

Նախորդող տաս տարիների ընթացքում Արևելյան գործընկերությունն
ապահովել է հստակ և դրական արդյունքներ ԵՄ-ում և իր արևելյան
հարևանության շրջանում գտնվող քաղաքացիների համար: Ելնելով
լայնածավալ խորհրդակցային գործընթացի արդյունքներից և առկա
ձեռքբերումներից՝ ԱԳ նոր քաղաքականությունը ուրվագծում է հինգ ճկուն և
միակցված երկարաժամկետ քաղաքական նպատակներ, որոնք միտված են
նոր առաջնահերթությունների արձագանքմանը, ընդհանուր
մարտահրավերների դիմակայության կայունության ամրապնդմանը, կայուն
զարգացման խթանմանը և շարունակական կոնկրետ արդյունքների
ապահովմանը քաղաքացիներին, մասնավորապես՝

- Միասին հանուն դիմակայուն, կայուն և ինտեգրված տնտեսությունների;
- Միասին հանուն հաշվետու հաստատություններ, իրավունքի
գերակայություն և անվտանգություն;
- Միասին դեպի շրջակա միջավայրի և կլիմայի դիմակայություն;
- Միասին դեպի դիմակայուն թվային փոխակերպում
- Միասին դեպի դիմակայուն, արդար և ներառական հասարակություններ

Մենք համատեղ ջանքեր կներդնենք, ապահովելու Եվրամիության և
գործընկեր երկրների միջև համագործակցությունը նշյալ հինգ նպատակների

ուղղությամբ՝ տրամադրելով ավելի արդյունավետ աջակցություն Էկոլոգիական և թվային փոխակերպումներին, խթանելով կայուն զարգացումը և ապահովելով ավելի արժանապատիվ աշխատատեղեր և տնտեսական հնարավորություններ, մասնավորապես՝ երիտասարդներին, ինչպես նաև խթանելով գենդերային հավասարությունը:

Ի՞նչ ի նկատի ունեք, երբ ասում եք «դիմակայության ամրապնդում»:

Դիմակայությունը բազմատիրույթ է, և այն նպաստում է կայունության, անվտանգության և բարգավաճման ապահովմանը: ԱԳ քաղաքականությունը 2020 թվականից հետո կենտրոնանում է կայուն բարեփոխումների արդիականացման և իրագործման ուղղությամբ, որոնք առանցքային են դիմակայուն տնտեսության, ժողովրդավարության, շրջակա միջավայրի, կլիմայի, և հասարակության ուղղություններով ներդրումների համար: Արևելյան գործընկերության տիրույթում դիմակայության ամրապնդումը կլինի մեր նոր քաղաքականության առանցքը, որպեսզի համատեղ ջանքերով անդրադառնանք փոփոխվող գլոբալ միջավայրում առկա ընդհանուր մարտահրավերներին: Այն բխում է նաև կառուցվածքային խորհրդակցությունների արդյունքներից:

Ե՞րբ է սկսվելու քաղաքական նոր շրջանակի իրականացումը: Որքա՞ն կկազմի ԵՄ-ն ֆինանսական ներդրումը:

Այս տարին հունիսին նախատեսված ԱԳ գագաթնաժողովը պետությունների և կառավարությունների ղեկավարների մակարդակով հնարավորություն կտա հաստատել առաջարկվող երկարաժամկետ քաղաքականության շրջանակը և մանդատ տրամադրել՝ մշակելու կոնկրետ նպատակների նոր փաթեթ՝ հիմք ընդունելով ներկա «2020 թվականի 20 արդյունք» օրակարգը: Այնուհետև՝ Եվրահանձնաժողովը և Արտաքին գործողության եվրոպական ծառայությունը, ԵՄ անդամ պետությունների, գործընկերների և հիմնական շահագրգիռ կողմերի հետ հետագա խորը քննարկումներից հետո կառաջարկեն իրատեսական և չափելի, թիրախների միտված արդյունքներ 2020 թվականի երկրորդ կեսի համար: 2020 թվականից հետո ԱԳ քաղաքականությունը կուղղորդի մեր հետագա համագործակցությունը և աջակցության շրջանակը և հիմք կդնի գործընկեր երկրների հետ ԵՄ համագործակցության հետագա ծրագրավորման համար տարածաշրջանային մակարդակում, ինչպես նաև կսահմանի հստակ ցուցումներ երկկողմ համագործակցության ձևաչափում: Զանի որ հետագա Բազմամյա ֆինանսական շրջանակի վերաբերյալ քննարկումները դեռ շարունակվում են, երկկողմ և տարածաշրջանային համագործակցության ուղղություններում ներդրված ֆինանսավորման ծավալները դեռևս հստակեցվում են:

Ինչպե՞ս է ԵՄ-ն օգնելու աշխատատեղերի և հնարավորությունների ստեղծմանը Արևելյան գործընկեր երկրներում:

Գործընկեր երկրներում աշխատատեղերի և տնտեսական հնարավորությունների ստեղծմանն աջակցելու համար ԵՄ-ն առաջարկում է

ավելի խորացնել տնտեսական ինտեգրումը գործընկեր երկրների հետ և նրանց միջև, ինչպես նաև ընդլայնել առևտուրի ծավալները, ինչը վերջին տասնամյակում գրեթե կրկնապատկվել է: ԵՄ-ն կաջակցի Ուկրաինայի, Վրաստանի և Մոլդովայի հետ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիների (ԽՀԱԱԳ) լիարժեք իրականացմանը, ինչպես նաև խրախուսի ԽՀԱԱԳ չհանդիսացող երկրների հետ համագործակցության ուժեղացմանը, օրինակ՝ ոլորտային առևտրի դյուրացման շուրջ համատեղ հետքերություններ կայացնող պայմանավորվածությունների միջոցով, բոլոր գործընկերների ներգրավմամբ:

Ինչպե՞ս է ԱԼԳ նոր քաղաքականությունն անդրադառնալու կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրներին:

Կլիմայի փոփոխության դեմ պայքարի, կանաչ հասարակությունների և տնտեսությունների համար ավելի լայն հնարավորությունների ապահովման և շրջանաձև տնտեսության խթանմանն ուղղված համատեղ աշխատանքները Արևելյան գործընկերության քաղաքականության շրջանակի բաղկացուցիչ մասն են կազմելու՝ 2020 թվականից հետո: ԵՄ-ն կօգնի գործընկեր երկրներին կատարել Փարիզյան համաձայնագրի ներքո իրենց ազգային մակարդակով սահմանված ներդրումները և արդիականացնել իրենց տնտեսությունները, նվազեցնել դրանցում ածխածնի արտանետումները և շարժվել դեպի կլիմայի չեզոքություն, միաժամանակ գիտակցելով ներդրումային մարտահրավերները:

Ինչպե՞ս է ԱԼԳ նոր քաղաքականությունն անդրադառնալու թվային փոխակերպմանը:

Ինչպես սահմանված է Եվրոպայի թվային ապագայի ձևավորման ռազմավարությամբ՝ թվային վերափոխումը Եվրամիությանը և գործընկեր երկրներին կարող է ընձեռել տնտեսական աճի և կայուն զարգացման խթանման հնարավորություններ: Ահա թե ինչու ԵՄ-ն ֆինանսական ներդրումներ կիրականացնի գործընկեր երկրների թվային վերափոխման գործընթացներում՝ ԵՄ օրենսդրությանը և լավագույն փորձին համահունչ, և նպատակ ունի նրանց հասանելի դարձնել Միասնական շթվային ուկայի առավելությունները: Սա հնարավորություն կտա ավելի ընդլայնել թվային ենթակառուցվածքների և ծառայությունների մատչելիությունը քաղաքացիների համար, բարելավել հանրային ծառայությունների և պետական կառավարման որակը, ընդլայնել լայնաշերտ կապի ենթակառուցվածքները՝ հատկապես մարզերում և համայնքներում և հզորացնուլ էլեկտրոնային կառավարումը:

Ինչպե՞ս է ԱԼԳ նոր քաղաքականությունն անդրադառնալու կառավարման, իրավունքի գերակայության և կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառներում առկա մարտահրավերներին

Արդյունավետ կառավարումը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքները հիմնարար արժեքները կազմում են ԵՄ-ն և գործընկեր երկրների միջև հարաբերությունների հիմքը և հենց Արևելյան գործընկերության առանցքը: Դրանք նաև գործուն շուկայական

տնտեսության և կայուն աճի նախադրյալներն են: Մասնավորապես՝ իրավունքի գերակայությունը արդյունավետ գործնական մթնոլորտ ապահովելու կարևորագույն գործոններից է և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման կարևոր գործոն: Գործընկերության հիմունքների նկատմամբ պետք է ստանձնել նոր հանձնառություն և ավելի ճշգրիտ չափազանց քաղաքացիների կողմից իրականացված բարեփոխումների իրական արդյունքներն ու ազդեցությունը:

ԵՄ-ն կշարունակի համագործակցել գործընկեր երկրների կառավարությունների հետ՝ ամրապնդելու իրավունքի գերակայությունը և կոռուպցիայի դեմ պայքարի մեխանիզմները, ինչպես նաև ամրապնդելու արդարադատության համակարգերի անկախությունը, անկողմնակալությունը, արդյունավետությունը և հաշվետվողականությունը, ինչպես նաև հզորացնելու պետական կառավարման ոլորտը: ԵՄ-ն շարունակում է հավատարիմ մնալ տարածաշրջանում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման իր հանձնառությանը, այդ թվում՝ քաղաքացիական հասարակությանը և լրատվամիջոցներին աջակցության միջոցով:

Անհրաժեշտ է վերանայել գործընկերության հիմունքների նկատմամբ հանձնառությունը և ավելի լավ չափել դատական բարեփոխումների ազդեցությունը: Այս համատեքստում՝ աջակցության շուրջ որոշում կայացնելիս ԵՄ-ն կքննարկի իրավունքի գերակայության ոլորտի բարեփոխումների ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը: Բարեփոխումների իրականացման լուրջ կամ երկարատև լճացումը կամ նույնիսկ հետընթացը կհանգեցնի ԵՄ ֆինանսավորման ծավալների կրճատմանը: Բացառություն կկազմի քաղաքացիական հատկացվող աջակցությունը:

Ինչպե՞ս է ԱԳ նոր քաղաքականությունն անդրադառնալու քաղհասարակության տարածքին վերաբերող մարտահրավերներին:

Արևելյան գործընկերությունն անցնում է կառավարությունների հետ հարաբերություններից անդին: Գործընկերությունը այլ հիմնական շահագրգիռ կողմերի, օրինակ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, հավասարապես կարևոր է: Քաղաքացիական հասարակության հետ աշխատանքը դարձել է Արևելյան գործընկերության անփոխարինելի բաղադրիչը և կարևոր դեր է կատարում ժողովրդավարության, իրավունքի գերակայության խթանման և առանցքային բարեփոխումների առաջնության գործում:

Այս առումով, ԱԳ քաղաքացիական հասարակության ֆորումը փորձի փոխանակման, փոխադարձ ուսուցման, աջակցության և գործընկերության ձևավորման համար եզակի, բազմակողմանի հարթակ է: ԵՄ-ն նաև հետագայում կմշակի ռազմավարական գործընկերության ին հարաբերությունների ձևաչափ քաղաքացիական հասարակության հիմնական կազմակերպությունների հետ՝ համագործակցության ամրապնդման, քաղաքացիական հասարակության ակտիվիստների առաջնորդական հմտությունների ձևավորման և սոցիալական գործընկերների հետ

ներգրավվելու համար, ինչպիսիք են արհմիությունները և գործատուների կազմակերպությունները:

Կշարունակի արդյո՞ք ԵՄ-ն պայքարել Ռուսաստանի կողմից կեղծ լուրերի և ապատեղեկատվության տարածման դեմ

Վերջին տարիներին Եվրամիության արժեքների դեմ աճող ապատեղեկատվության ֆոնին՝ ԵՄ-ն աշխատանք է տարել հաղորդակցության առավել ուժեղ և ռազմավարական մոտեցում մշակելու ուղղությամբ: Մենք ամրապնդել ենք ԵՄ-ի հաղորդակցությունը գործընկեր երկրներում՝ պարզ, հարմարեցված հաղորդագրությունների միջոցով և բարձրացնելով՝ տարածաշրջանի և բնակչության համար ԵՄ քաղաքականության և գործողությունների դրական ազդեցության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Արևելյան գործընկերության նոր շրջանակի ներքո նախատեսվում է վերանայել երիտասարդության իրազեկվածության կենտրոնացումը: Ռազմավարական հաղորդակցությունը կարևոր նշանակություն ունի դիմակայության ամրապնդման համար և՛ հանդիսանում է քաղաքացիների ծառայությանը գործին լծված քաղաքականություն մշակողների հիմնական պարտականությունը:

ԵՄ-ն կքննարկի նաև գործընկեր երկրներին համար հնարավոր ուսումնական դասընթացներ և կարողությունների զարգացման ապահովելու հեռանկարները, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, հիբրիդային սպառնալիքներին հակազդեցության ուղղությամբ:

Դուք ասում եք՝ ԵՄ-ն կաշխատի Արևելյան գործընկեր երկրների հետ՝ ընդհանուր մարտահրավերների լուծման ուղղությամբ, իսկ ի՞նչ կասեք Կորոնավիրուսի համաճարակի մասին:

Դիմակայության գաղափարն էլ ավելի է կարևորվում՝ շարունակվող COVID-19 համաճարակի ֆոնին: ԵՄ-ն աջակցելու է գործընկեր երկրներին՝ հանրային առողջության ոլորտում, մասնավորապես՝ բժշկական հաստատությունների արդիականացման, էլեկտրոնային առողջապահության, բժշկական անձնակազմի վերապատրաստման և բուժօնության հասանելիության և մատչելիության խթանման գործում: Սա կներառի աջակցություն վարակիչ և ոչ-վարակիչ հիվանդությունների ավելի արդյունավետ հակազդմանը, ինչպես կորոնավիրուսային հիվանդության դեպքում է (COVID-19):

ԵՄ-ն նաև ուսումնասիրում է, թե ինչ կարելի է անել ճգնաժամի սոցիալ-տնտեսական հետևանքները մեղմելու տեսանկյունից, օրինակ՝ ՓՄՁ աջակցության սխեմաների և կարգավորումների միջոցով՝ հաշվի առնելով նրանց առջև ծառայած հնարավոր մարտահրավերները, օրինակ՝ լուծարման վտանգը: Ինչ վերաբերում է պետական օգնությանը, Հանձնաժողովը թույլ է տալիս ավելի մեծ ճկունություն ԵՄ պետական օգնության տրամադրան կանոնակարգերում, թույլատրել արագ աջակցություն ցուցաբերել անդամ պետություններում գործող ընկերություններին: ճկունություն է ցուցաբերվում նաև գործընկերների համար՝

հավատարիմ մնալով Ասոցացման համաձայնագրերի և ԽՅԱԱԳ-ի դրույթների պահանջներին:

Ի՞նչ թիրախային արդյունքներ են ապահովվել ԱԼԳ կողմից նախորդ 10 տարիների ընթացքում

Անցնող տասնամյակի ընթացքում Արևելյան գործընկերությունն առաջընթաց է գրանցել հիմնվելով ընդհանուր արժեքների, փոխադարձ հետաքրքրությունների և պարտավորությունների, ինչպես նաև ընդհանուր պատկանելիության և պատասխանատվության վրա: Այս ռազմավարական գործընկերությունը հասունացել և զարգացել է այնպիսի ձեռքբերումներով, ինչպիսիք են Ասոցացման համաձայնագրերը (ներառյալ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտիները), Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրերը, մուտքի արտոնագրերի դյուրացման և Ռեադմիսիայի շուրջ համաձայնագրերը, վիզաների ազատականացումը և գործընկերային առաջնահերթությունները, որոնք այսօր հանդիսանում են մեր հարաբերությունների և համագործակցության հիմնաքարը:

Վերջին տասնամյակում առևտրի ծավալները ԵՄ-ի և Արևելյան գործընկերությունների միջև գրեթե կրկնապատկվել են: Եվրամիությունը Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար մեկ առևտրային գործընկերն է, և երկրորդ է՝ Հայաստանի և Բելառուսի համար: 2016-ից մինչև 2019 թվականն ընկած ժամանակահատվածում Եվրամիության հետ առևտրի ծավալներն ավելացրել են՝ Հայաստանը՝ 27 տոկոսով, Ադրբեջանը՝ 55 տոկոսով, Բելառուսը՝ 40 տոկոսով, Վրաստանը՝ 7 տոկոսով, Մոլդովան՝ 42 տոկոսով և Ուկրաինան՝ 50 տոկոսով:

Արևելյան գործընկերներ երկրների ավելի քան 125,000 փոքր և միջին ձեռնարկություններ ստացել են ԵՄ ֆինանսավորում ստեղծելով կամ պահպանելով ավելի քան 250,000 աշխատատեղ: Միայն 2018 թվականի ընթացքում ավելի քան 60 միլիոն եվրո հատկացվել է գրեթե 7,250 ՓՄՁ-ներին, որոնք ղեկավարվել են կանանց կողմից, և 290 կին ձեռնարկատեր մասնակցել են դասընթացների EU4Business նախաձեռնության շրջանակներում:

Տրանսպորտային կապի ոլորտում ներդրվել է 20 մլն եվրո բյուջե տեխնիկական աջակցության գործիք, որը կօգնի օժանդակել Տրանս եվրոպական տրանսպորտային միջանցքների ընդլայնմանը: Եվրամիության Տրանս եվրոպական տրանսպորտային միջանցքների ընդլայնման նախաձեռնությամբ նախատեսվում է 4,800 կմ նոր և վերականգնված ճանապարհներ և երկաթուղիներ մինչև 2030 թվականը, ինչը նոր հնարավորություններ կբացի ԵՄ-ի և Արևելյան գործընկերությունների և նրանց միջև տնտեսական զարգացման և փոխանակումների համար:

Ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ներդրումների առումով, Արևելյան Եվրոպայի Էներգախնայողություն և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P) հիմնադրամի միջոցներով ավելի քան 150 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհ է տրամադրվել 36 նախագծերի՝ օգուտ տալով 8

միլիոն մարդու: Դա հնարավոր է դարձրել կատարել շուրջ 800 մլն. եվրո ընդհանուր ներդրումներ:

Արևելյան գործընկերությունը թիրախավորել է նաև երիտասարդությանը և հետազոտությունների տիրույթը: ԵՄ-ն աջակցել է 100 նախագծերի, որոնք նպաստում են երիտասարդության շրջանում քաղաքացիական ներգրավվածությանն ու ձեռներեցությանը; տարածաշրջանի 23.000 երիտասարդներ օգտվել են EU4Youth նախաձեռնությամբ հասանելի դրամաշնորհներից, որպես աջակցուն վեց լայնածավալ ծրագրերին՝ երիտասարդության զբաղվածության խթանման, նրանց աշխատունակության և աշխատանքի տեղավորման աջակցության, և 915 հետազոտողներ տարածաշրջանից մասնակցել են Մարի Սկլոդոսկա-Կյուրի սխեմայից:

2016 թվականից ի վեր Արևելյան գործընկեր երկրների 32.000 ուսանող և գիտական աշխատող մասնակցեցել են ակադեմիական փոխանակումներին՝ ի շնորհիվ «Էրազմուս պրոլս»- ծրագրի; 46.000 երիտասարդներ ներգրավվել են այլ փոխանակուման ծրագրերում, այդ թվում կամավորական ձևաչափերում:

2019 թվականի Կառուցվածքային խորհրդակցությունը հաստատեց, որ Արևելյան գործընկերությունն ուժեղ է և քաղաքացիներին տալիս է կոնկրետ օգուտներ: Թիրախներին միտված «2020 թվականի 20 արդյունք» օրակարգը միտված է եղել հատկապես ուժեղ տնտեսության, ուժեղ կապի և ուժեղ հասարակության ապահովմանը: Որոշ ձեռքբերումներ եղել են, երբ խոսքը գնում է ավելի ուժեղ կառավարման մասին, բայց դեռ ավելին պետք է արվի իրավունքի գերակայության, կոռուպցիայի դեմ պայքարի, լրատվամիջոցների անկախության և քաղաքացիական հասարակության տարածության թեմատիկ ուղղություններով: